ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

«01» հոկտեմբեր 2024թ. N 1482-Ա

ՀՐԱՄԱՆ

«ՍՏԱԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 27-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

ՊԱՐԶՎԵՑ

Գործի նախապատմությունը.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՍՏԱԳ» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Կատարող) 30.12.2021 թվականին կնքվել է «N ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/2Ս-3» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Կատարողը ստանձնել է Մ-3, Թուրքիայի Հանրապետության սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ156+600 Ձորագետ գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման աշխատանքները կապալառուն իրականացնում է ապահովելով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման աշխատանքների կատարման և ընդունման կարգի պահանջները:

Կապալառուն պարտավոր է ապահովել ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների շահագործումը և նրա կազմում ընդգրկված օբյեկտների ամբողջականությունը, անվնաս պահպանությունը, մաքրությունը և նորմալ աշխատանքը:

Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման հիմնական սկզբունքն է՝ կամուրջների կոնստրուկտիվ տարրերի վնասվածքների առաջացման կանխարգելումը, որի համար անհրաժեշտ է իրականացնել կամուրջների զննման, հսկողության, խնամքի և կանխարգելիչ նորոգման ամբողջական աշխատանքներ: Նշված աշխատանքները պետք է իրականացնել Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական նորմերին, կանոններին և այլ նորմատիվ փաստաթղթերին համապատասխան: Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման հիմնական տեխնիկական պահանջները, որոնք պարտադիր են կամուրջների պահպանման կապալառու կազմակերպությունների կողմից կատարման համար, հետևյալն են՝

1) զննումների և դիտարկումների իրականացում
2) հսկողության ապահովում
3) խնամքի և կանխարգելիչ նորոգման ապահովում:

Կապալառուն պարտավոր է կամրջի հիմնական կոնստրուկտիվ տարրերի պահպանման հիմնական տեխնիկական պահանջների ապահովման նպատակով տեղամասում իրականացնել հերթապահություն:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն հրամանին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.4 կետի 2.4.1 ենթակետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքը կատարելու ինչպես սկզբնական և վերջնական, այնպես էլ միջանկյալ ժամկետները խախտելու համար, եթե այլ բան սահմանված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ նախատեսված չէ պայմանագրով:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն հրամանով հաստատված թիվ 2 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ կամրջի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունումը իրականացվում է մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա յոթերորդ աշխատանքային օրը:

Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը, Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն հրամանով հաստատված փաստաթղթերը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը փաստաթուղթը (Հավելված N 3):

Պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

Կատարողը սահմանված ժամկետում չի ներկայացրել փետրվար և մարտ ամիսների աշխատանքների կատարման վերաբերյալ Պայմանագրի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը:

Պատվիրատուն 08.05.2024 թվականի N ՃԴ/01//1834-2024 գրությամբ տեղեկացրել է Կատարողին, որ սահմանված ժամկետում չեն ներկայացվել փետրվար և մարտ ամիսների աշխատանքների կատարման վերաբերյալ Պայմանագրի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը և Կատարողի կողմից խախտվել են աշխատանքների կատարման ժամկետները, որին ի պատասխան Կատարողը պատասխան գրություն չի ներկայացրել:

Պայմանագրի 2.1 կետի 2.1.3 ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կապալառուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Հիմք ընդունելով, որ «ՍՏԱԳ» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, համաձայն Պայմանագրի 2.1 կետի 2.1.3 ենթակետի «բ» պարբերության դրույթով՝ Նախարարության կողմից միակողմանի լուծվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/2Ս-3» ծածկագրով Պայմանագիրը:

<u>Գործի քննության իրավական հիմքերը.</u>

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 706-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապալի պայմանագրում նշվում են աշխատանքը կատարելու սկզբնական և վերջնական ժամկետները: Կողմերի համաձայնությամբ՝ պայմանագրում կարող են նախատեսվել աշխատանքի առանձին փուլերի ավարտի (միջանկյալ) ժամկետներ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ): Մասնակիցն ընդգրկվում է ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Պայմանագրի 2.1 կետի 2.1.3 ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Կատարողը խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքները և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՍՏԱԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:

2. Հրամանը տրամադրվում է «ՍՏԱԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Կատարողին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «ՍՏԱԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն իրազեկելուն հաջորդող օրվանից:

7/1/2024

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: YERITSYAN ARTUR 1609770064 **Ա. ԵՐԻՑՅԱՆ**

ք. Երևան